



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

#### Արձանագրություն

Արևելագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. Ապրիլի 20 թիվ 3 նիստի

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 17-ը:

#### Օրակարգում

1. Ֆակուլտետի մեծ խորհրդի անդամների հաստատման հարցը
2. Պետական գնությունների ժամանակացույցի կարգը
3. Արաբագիտության ամբիոնի ասիստենտներ Մ. Յավրուսյանի և Հ. Քոչարյանի թեկնածությունները դոցենտի կոչման մրցույթին երաշխավորելու հարցը
4. Հր. Աճառյանի 225 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը տպագրման երաշխավորելու հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

#### ԼՍԵՑԻՆ –

1. Արևելագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի անդամների հաստատման հարցը
2. Պետական գնությունների ժամանակացույցի կարգը
3. Արաբագիտության ամբիոնի ասիստենտներ Մ. Յավրուսյանի և Հ. Քոչարյանի թեկնածությունները դոցենտի կոչման մրցույթին երաշխավորելու հարցը
4. Հր. Աճառյանի 225 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը տպագրման երաշխավորելու հարցը,
5. Ամիրբեկյանի դոցենտության մերժման հարցը
6. Միջազգային ամսագրերում տպված հոդվածների հեղինակներին դրամային խրախուսման հարցը

7. Քվեաթերթիկների ձևի փոփոխման հարցը:
8. ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ Արեգ Սավգուլյանին արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի 4-րդ կուրսում «Իրանի ինքնամեկուսացումը և Արևմուտքը» խորագրով հատուկ դասընթաց վարելու երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Յ Ի Ն – Արևելագիտության ֆակուլտետի դեկան բ.գ.թ. պրոֆ. Գ. Մելիքյանը, արաբագիտության ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Ս. Տոնիկյան, իրանագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. պրոֆ. Գ. Ասատրյանը, դեկանի տեղակալներ բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանը և բ.գ.թ., դոցենտ Վ. Ոսկանյանը, արաբագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Դ. Հովհաննիսյանը, դոցենտ, բ.գ.թ. Ս. Կարաբեկյանը և իրանագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վ. Առաքելովան:

Ո Ր Ո Շ Ե Յ Ի Ն

1. Հաստատել՝ Սողոմոնյան Աշոտին, Գալշոյան Սիրանուշին, Յավրումյան Մարատին, Հարությունյան Արայիկին, Էլմասյան Մարիամին, Ասատրյան Հովհաննեսին, Յարայան Ռադիկին, Ղազարյան Լյուսյային, Ամրյան Թերեզային, Գևորգյան Գառնիկին որպես արևելագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի անդամների:  
7 ուսանողների հարցով, որոշվեց առաջարկել ուսխորհրդին ներկայացնել թեկնածուների ցուցակը՝ պահպանելով համամասնությունը:
2. Հաստատել պետական գնությունների ժամանակացույցի կարգը
3. Նիստը վարողը առաջարկեցին արաբագիտության ամբիոնի ասիստենտներ բ.գ.թ. Մ. Յավրումյանի և պ.գ.թ. Հ. Քոչարյանի դոցենտի գիտական կոչման մրցույթին երաշխավորելու հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Խորհուրդը բաց քվեարկությամբ, միաձայն որոշեց փակ (գաղտնի) քվեարկության դնել արաբագիտության ամբիոնի ասիստենտներ բ.գ.թ. Մ. Յավրումյանի և պ.գ.թ. Հ. Քոչարյանի դոցենտի գիտական կոչման մրցույթին երաշխավորելու հարցը և միաձայն

հաստատեց հաշվիչ հանձնաժողովի (հանձնաժողովի նախագահ՝ Ս. Տոնիկյան, հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ավագյան, Թ. Չարչյան, Վ. Ոսկանյան) կազմը:

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկության:

ԼՍԵՑԻՆ. - Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս. Տոնիկյանի հաղորդումը փակ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Խորհրդի 24 անդամներից, ներկա էին 17-ը և քվեարկությանը մասնակցել են 17-ը: Բաժանվել է 17 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 17 քվեաթերթիկ:

արաբագիտության ամբիոնի ասիստենտներ Բ.Գ.Թ. Ս. Յավրուսյանի և պ.գ.թ. Հ. Քոչարյանի դոցենտի գիտական կոչման մրցույթին երաշխավորելու համար քվեարկել են՝

կողմ - 17

դեմ - չկա

անվավեր քվեաթերթիկ - չկա

ՈՐՈՇԵՑԻՆ. 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ,

2. հաշվի առնելով, որ արաբագիտության ամբիոնի ասիստենտներ Բ.Գ.Թ. Ս. Յավրուսյանի և պ.գ.թ. Հ. Քոչարյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001 թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին՝

ա) երաշխավորել արաբագիտության ամբիոնի ասիստենտներ Բ.Գ.Թ. Ս. Յավրուսյանին և պ.գ.թ. Հ. Քոչարյանին դոցենտի գիտական կոչման մրցույթին

բ) միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ արաբագիտության ամբիոնի ասիստենտներ Բ.Գ.Թ. Ս. Յավրուսյանին և պ.գ.թ. Հ. Քոչարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

4. Հր. Աճառյանի 225 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը տալ ամբիոններին գրախոսության նպատակով,

5. Ամիրբեկյանի դոցենտության մերժման հարցով՝ խնդրել դեկանին խորհրդի անունից դիմել միջնորդությամբ ԲՈՀ-ին

6. Միջազգային ամսագրերում տպված հոդվածների հեղինակներին դրամային խրախուսման առաջարկել:

7. Փոխել քվեաթերթիկների ձևը:

8. Երաշխավորել ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ Արեգ Սավգույանին արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի 4-րդ կուրսում «Իրանի ինքնամեկուսացումը և Արևմուտքը» խորագրով հատուկ դասընթաց վարելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈԶԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈԶԱՐՅԱՆ